«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Երևանի հ. 164 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Աիդա Մատինյան

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ

Բովանդակություն

Ներածություն 3
1. Հայոց ազգային տոնական համակարգը 5
2. Ծեսերի, տոնակատարությունների դերը մանկապարտեզում՝ որպես նախադպրոցականների զարգացման միջոց 12
3. Գործնական մաս 15
Եզրակացություն 17
Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Տոները միշտ էլ գոյություն են ունեցել: Պատմության հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը տոնախմբությունները առանձնակի տեղ են գրավել մարդկային կյանքում: Տոն նշանակում է հանգիստ ու ազատ օր: Հանգիստ՝ առօրյա զբաղմունքներից, աշխատանքից ազատ օր՝ ծառայելու և նվիրվելու համար օրվա խորհրդին, Աստծո փառաբանությանը և կրոնական պաշտամունքին: Տոն բառը հին հայկական ծագում ունի:

Քրիստոնյաների հոգևոր կյանքի անբաժան մաս են կազմում եկեղեցական տոները, որոնցում արտահայտվում է նրանց հավատը, աստվածաճանաչողությունը և աստվածապաշտությունը: Տոնը յուրաքանչյուր քրիստոնյայի համար համընդհանուր ուրախության և պայծառության օր է: Այդ օրերին ուրախանում և փառաբանում ենք Աստծուն Նրա շնորհած մեծամեծ բարիքների համար: Տոն օրերին եկեղեցում կատարվող արարողություններն ուղեկցվում են հոգեզմայլ շարականների երգեցողությամբ ու աղոթքներով: Այդ օրերին եկեղեցին արտաքնապես Է՛լ ավելի է զարդարվում, որը խորհրդանշում է մեր ներքին հոգևոր ուրախությունը և Աստծո սուրբ փառքը: Եկեղեցական տոները ավետարանական պատմության, հիշարժան որևէ իրադարձության կամ սրբերի, նահատակների հիշատակի ոգեկոչմանն են նվիրված: Եկեղեցին իր տոների միջոցով մեզ պատմում է Հիսուս Քրիստոսի, Սուրբ Մարիամ Աստվածածնի, սրբերի կյանքի և նահատակության մասին:

Յուրաքանչյուր տոն ունի իր խորհուրդը, իմաստն ու նշանակությունը, պատգամը և ավանդությունը: Դրանք աստվածադիր են և Սուրբգրային ակունքներ ունեն:

Տոները կրոնական ջերմեռանդության և բարեպաշտության առիթ են ամեն մի քրիստոնյայի համար: Հանրակրթության ընթացքում իրականացվող գործունեության մի շարք ձևեր դառնում են ծեսի բաղկացուցիչ: Մի դեպքում դա կարող է ծառատունկ կամ ծաղկատունկ լինել (Ծառզարդար, Զատիկ, կանանց տոն), մի այլ դեպքում՝ ծեսի հետ կապված պաշտամունքային նյութերի հատկությունների հայտնաբերում փորձերի և արարողական այլ միջոցներով (Վարդավառ, Համբարձում, գարնանացան, Ամանոր, Տյառնընդառաջ՝ Տրնդեզ): Մի այլ դեպքում սենյակային կամ այլ բույսերի աճեցում կարող է լինել (կանանց տոն, տարվա սկիզբ): Խոհանոցում ծիսական ուտելիք-կերակուրների պատրաստումը, որ հատուկ է համարյա բոլոր տոներին, իսկական բնական, լաբորատոր գործունեություն է:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել նախադպրոցականների զարգացման վրա տոների և ծեսերը ազդեցությունը:

Աշխատանքի խնդիրները

- Բացահայտել ծեսերը և տոնակատարությունների դերը՝ նախադպրոցականների անձի ձևավորման վրա:
- Հիմնավորել տոների և ծեսերի իրականացման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում:

1. Հայոց ազգային տոնական համակարգը

Տոնը որպես սոցիալ-մշակութային ֆենոմեն. էությունը, գործառույթները տիպաբանությունը, ուսումնասիրությունը հայ ազգաբանական գիտության մեջ: Այն որպես կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչների յուրահատուկ միկրոհամալիր: Տոները որպես կրոնական պաշտամունքի հենքի վրա կատարվող ժողովրդական տոնահանդես: Քրիստոնեության ընդունումը և տոնական համակարգի վերափոխումը: Գլխավոր տոներ (Նավասարդ կամ Նոր տարի, Բարեկենդան, Տյառնընդառաջ, Համբարձում, Վարդավառ): Զուտ քրիստոնեական տոներ՝ Սուրբ Ծնունդ և Ջրօրհնեք, Սուրբ Սարգիս Ծաղկազարդ Զատիկ: Տոների ձևերի պայմանավորվածությունը սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակութային, կրոնական գործընթացների փոխազդեցություններով: Տոնի՝ հասարակական կյանքի կանոնակարգման ու բարոյադաստիարակչական նշանակությունը: Ավանդութային և նորօրյա տոներ: Եկեղեցու դերը տոնական համակարգի պահպանման գործում[1]:

Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում

Տոնի անվանումները և տոնակատարության ժամանակը: **Նավասարդ** – Նոր տարի, անվան մեկնությունը, կատարման ժամանակը (մարտի 20-21, գարնան գիշերահավասարին, ապա՝ տոմարական առանձնահատկություններով պայմանավորված՝ տեղափոխվել է օգոստոսի 11-ին): Ս. Երևանցի կաթողիկոսի (XVIII դ.) մշակած նոր տոնացույցի սկիզբը՝ հունվարի 1-ը՝ Նոր տարի, Տարեմուտ, Ամանոր, Կաղանդ, Տարին գլուխ և այլ անվանումներով: Հին և նոր տոմար դրանց մեկնությունը:

Տոնի հատկանիշները, սովորութային համալիրը. ա) բնակարանը, բնակավայրը, մարդու մարմինն ու հոգին մաքրելը հարդարելը, բ) ծիսական ուտեստը, գ) ծիսական այցելությունները, դ) բախտ գուշակությունները, ե) հաջողությունն ապահովելուն միտված և չարը կանխարգելող հմայական արարողությունները: Ամանորյան տոնն ուղեկցող սովորույթների ու ծեսերի տարածքային և իմաստային բնութագրությունը: Քրիստոնեական տարեմուտ: Ձմեռ-պապ կերպարի դրսևորման ձևերը հայոց ավանդական և ժամանակակից ամուսնության տոնակատարություններում:

Ձմեռ պապն ու տոնածառը դրանց հնագույն հայկական նախատիպերը (Սահակ Պարթևն ու ձիթենու ճյուղը) [2]:

---

[1] Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015. էջ 65-68

[2] Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015. էջ 65-68

Քրիստոսի Ծնունդը և մկրտությունը որպես զուտ եկեղեցական տաղավարային տոն, ծագումնաբանությունը, սովորույթներն ու ծեսերը: Տոնը որպես եկեղեցական Տիրունի տոն, տոնի ծագումնական հենքով և ավանդական կենցաղային դրսևորումներով աղերսը հեթանոսական հնագույն ժամանակաշրջանի, հին աստվածների պաշտամունքի, բնության վերակենդանացման, վերածնության խորհրդի հետ:

Տոնակատարության ժամանակի խնդիրը (451 թ. Քաղկեդոնի ժողովի որոշմամբ արևմտյան եկեղեցիները Քրիստոսի ծնունդը սկսեցին նշել դեկտեմբերի 25-ին, իսկ մկրտությունը՝ հունվարի 6-ին, իսկ Առաքելական հայ եկեղեցին Ծնունդը և Մկրտությունը հունվարի 6-ին): Տոնի հիմնական արարողակարգը:

Սուրբ Սարգսի տոնի ավանդական ժողովրդական և եկեղեցական մեկնությունը, տոնին ուղեկցող սովորույթների ու ծեսերի ռեգիոնալ (տարածքային) բնութագրությունը:

Տոնը իբրև եկեղեցական տաղավար տոն, ծագման արմատներով որպես գարնան պաշտամունքի հայկական մարմնավորում, քրիստոնեական սրբի կերպարի տակ Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելի քրիստոնեական պատում, որպես բնության զարթոնքի համատեքստում՝ նաև երիտասարդության սիրո, երջանկության և ընտանիքի հետ առնչվող խորհուրդ:

Տոնին ուղեկցող Առաջավորաց պասը բախտագուշակությունները, ուտեստը, ուխտագնացությունները: Սուրբ Վալենտինի պաշտամունքի մասին կատարվող զուգահեռները, էությունը, նպատակը: Սուրբ Սարգսի տոնի կատարման աշխուժացմանն ուղղված ազգային եկեղեցու ձեռնարկումները և տոնի դրսևորումները, «վերաձևավորման» փորձերը մեր օրերում:

Տյառնընդառաջը հայ ժողովրդական տոնացույցում:

Տոնի անվանումները, ժամանակը, հայագիտության մեջ տոնի վերաբերյալ եղած տեսակետները, էությունը, արարողակարգը: Տոնական խարույկը և նրա հետ կապված բախտագուշակությունները, ծիսական խարույկի հետ աղերսվող արգասաբեր հատկանիշները, նոր հանգուցյալներին տոնի միջոցով սգից հանելու սովորույթը: Տոնածիսական ուտեստը, նորապսակների ազգականների փոխայցելություններն ու նվիրատվությունները: Տյառընդառաջի ժամանակակից տոնահանդեսը, այն նաև որպես ընտանեկան տոն, հատկապես նորապսակների:

Բարեկենդանը հայ ժողովրդական տոնացույցում:

Տոնակատարման ժամանակը և տևողությունը, անվանումները: Բարեկենդանը որպես գարնան բնության զարթոնքը և նոր կյանքի սկիզբը խորհրդանշող հնագույն տոն: Տոնի էությունը, բաղադրիչները՝ զանգվածային խնջույքները, շնորհավորական փոխայցելությունները, խնամախոսությունները, նշանդրեքներն ու հարսանիքները, հարսների

դարձ գնալու սովորույթը, ազատ ու անկաշկանդ գործելակերպը, մանկապատանեկան խաղերն ու զվարճությունները, պարերը, թատերական ներկայացումները: Բարեկենդանյան ներկայացումների բնույթը, կենցաղային, պատմական, էթնոմշակութային, սիրային, ներհամայնքային, սոցիալական և այլն: Բարեկենդանի ուտելիքներ, քանակը ըստ օրերի[3]:

Հայոց Բարեկենդանի հանդիսությունների ընդհանրությունները Եվրոպական և սլավոնական ժողովուրդների կառնավալների հետ: Բարեկենդանի ժամանակակից տոնակատարությունը, դրա իրագործման հնարավորության հարցերը:

Մեծ Պահքի ծիսահամալիրը հայ ժողովրդական տոնացույցում:

Մեծ Պահքը որպես զուտ եկեղեցական ծիսահամալիր, ժամանակը, տևողությունը, ինքնամաքրման, ինքնազոհաբերման, ապաշխարության մաքրակենցաղության ու ժուժկալության, պահեցողության յոթ շաբաթյա խորհուրդը, ծագման հնագույն արմատները (որոշ տարրեր առնչվում են հայոց գարնանային Նավասարդի հետ): Ծիսահամալիրի բաղադրչները, անվանումները, ուտեստը, արգելանքները, չարիքը կանխելու և առատությունն ապահովելուն ուղղված ծիսաշարքը, շնորհավորական այցելություններն ու նվիրատվությունները, ծոմապահությունը, երիտասարդների ձիախաղերը, նորահարսների և աղջիկների՝ ճլորթի խաղերը ուխտագնացությունները, հանգուցյալների ընտանիքներում Մեծ Պասի առթիվ հատուկ սեղանների պատրաստումը և այցելությունները նրանց ընտանիքներում, Մեծ Պասի առաջին շաբաթվա օրերի անվանակոչումները և այլն:

Մեծ Պասը մեր օրերում:

Գարնանային տոներ

Ծաղկազարդ, Զատիկ, Կանաչ-Կարմիր կիրակիներ: Ծաղկազարդի տոնի նշման ժամանակը (Մեծ Պասի նախավերջին կիրակի օրը), խորհուրդը, անվանումները, նախաքրիստոնեական արմատները և կապը բնության զարթոնքն արտացոլող հավատալիքների հետ (այդ օրվա նրա ծիսական արարողությունների մեծ մասը նվիրված էր գարնան զարթոնքին և ցանքի նախաատրաստություններին, պտղաբերության ապահովմանը):

Տոնի գլխավոր բաղադրիչը (ձիթենու, ուռենու) սրբազան ոստի հետ կապված ծիսաշարի խորհուրդը: Ծաղկազարդը որպես աղջիկների ու պատանիների տոն, տոնի ժամանակ կատարվող **ծաղկազարդի նշանադրություններ**, նորահարսների հայրական տուն դարձ գնալու և մինչև Զատիկ մնալու սովորույթի արարողակարգը, սրբազան ճյուղերի հետ կապված հավատալիքների համալիրներ, մերձավորների շիրիմների այցելութ-

[3] Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015. էջ 65-68

յուններ, պատանիների կարկաչա և ճոճանակ խաղեր, երգ-մաղթանքներով տները այցելություններ:

Ծաղկազարդի երեկոյան եկեղեցական «դռնբացեք» անվամբ արարողությունը և այլն, դրանց բնութագրումները:

Ծաղկազարդի տոնահանդեսը մեր օրերում: Ծաղկազարդի քրիստոնեական մեկնաբանությունը (Քրիստոսի մուտքը Երուսաղեմ և արմավենու կամ ձիթենու ճյուղերով նրան դիմավորման հանդիսությունը): Եկեղեցու շրջակա տարածքը աշխույժ ուրախ մթնոլորտի վերածվելու, ուռենու ճյուղեր, դրանցով հյուսված պսակներ և այլնի վաճառքի, եկեղեցու կողմից այդ օրը մանուկների օրհնության օր հայտարարվելու, ընտանիքներով եկեղեցի այցելելու, առավոտյան պատարագին ուռենու ճյուղերի օրհնությանը մասնակցելու և այլ արարողակարգեր:

Զատիկ, տոնի քրիստոնեական խորհուրդը (Քրիստոսի հարությունն է «Քրիստոս հարյավ ի մեռելոց», «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի), աղերսվում է բնության հարության գաղափարին: Զատիկ բառի մեկնության հարցի շուրջ (տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է, նաև բնության գույների զատումը, անվանումները, տոնի հեթանոսական արմատները, կատարման ժամանակը (մարտի 22-ից հետո մինչև ապրիլ 25-ը ընկած ժամանակահատվածում): Զատկական համայնքային (ախառ) և ընտանեկան զոհաբերությունները (գյուղատնտեսության բոլոր ճյուղերի հաջողության ապահովմանը ուղղված), ուտեստը, շնորհավորական փոխայցելությունները, նվիրատվությունները, ձվերը և ձվախաղերը տղաների երգող խմբերի տնետուն շրջայցերը: Ձվերի գույները բնության, գարնան գույներն են: Ձուն որպես կենաց ծառի, կյանքի հավերժության խորհրդանիշ: Զատկի տոնը որպես համայնքային, ազգակցական, դրացիական ընտանեկան, երիտասարության մերձեցման տոն:

Զատկի ուտեստը: Սպասված տոն լինելու խորհուրդը: (Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն է՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը) [4]:

Զատկի տոնի զանգվածային և ընտանեկան ուխտագնացությունները, ննջեցյալների շիրիմներին այցելությունները, խնջույքներ կազմակերպելու և տոնական ուտելիքների մի մասը գերեզմանների վրա թողնելու սովորույթը («մեռելափայ»), նախնիների պաշտամունքի այլ դրսևորումներ (Զատկին օր ու գիշեր սեղանը բաց պահելու, դռներն ու լուսամուտները չծածկելու ավանդական սովորույթները, նրանց պատվին անուն-անուն բաղարջներ թխելը, աղքատներին բաժանելն և այլն):

---

[4] Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015. էջ 65-68

Համբարձում: Տոնի խորհուրդը (Հիսուս Քրիստոսի համբարձման, Հայր Աստծո մոտ բարձրանալու հիշատակը), ժամանակը (Մեծ Զատկի տոնից 40 օր հետո, հինգշաբթի օրը), անվանումները (Վիճակի օր, Ջանգյուլումի օր, Կաթնապրի օր, Ծաղկամոր կիրակի, Ճակատագրի տոն և այլն): Տոնի ծագման հեթանոսական արմատները, բնության վերազարթոնքը խորհրդանշող հավատալիքների ծիսահամալիրը: Ուխտագնացությունները, հավատալիքները բախտագուշակությունները, արգելանքները, գլխավոր բաղադրիչը («-Վիճակ-Ջանգյուլում»), դրա քրիստոնեական մեկնությունը (Հուդայի փոխարեն վիճակահանությամբ նոր աշակերտ ընտրելու ավանդույթունը), իրական խորհուրդը (աղջիկների տոնն էր և արտացոլում էին ծառ ու ծաղկի պաշտամունքի, գեղեցիկ սեռի ազատության և երջանկության խորհուրդները): Տոնի աղերսը սիրո և պտղաբերության հմայության գաղափարի հետ[5]:

Ամառային տոներ:

Վարդավառը հայ ժողովրդական տոնացույցում:

Վարդավառը կամ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը որպես ժողովրդական հավատալիքային և կրոնական համակարգերի գաղափարական և ծիսապաշտամունքային տարրերի ներդաշնակ համալիր: Տոնի խորհուրդը, ծիսարարողակարգը, անցկացման ժամկետները (Զատկի 14-րդ կիրակի օրը կամ Զատկից 98 օր հետո և ունի 35 օրվա շարժունակություն՝ հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը), անվանումները: Տոնի բազմաշերտությունը. Նավասարդ (ամառային արևադարձ) – Հովհաննես Մկրտչի տոն – Քրիստոսի պայծառակերպություն կամ Վարդավառ:

Վարդավառի նավասարդյան ակունքները, որպես ամառային արևադարձի տոն: Հայագիտության մեջ տոնի ուսումնասիրվածությունը: Վարդավառ բառի ստուգաբանությունը:

Վարդավառի ծագումը և քրիստոնեական խորհուրդը: Աղերսները հեթանոսական Անահիտ, Աստղիկ դիցուհիների պաշտամունքի, Ամանոր – Նավասարդի, համաշխարհային ջրհեղեղի կամ Նոյան տապանի նշանավոր իրադարձության հետ: Ծիսահամալիրի կենտրոնական բաղադրիչը ջուրն է և մատաղը, աղավնին, խնձորը, վարդը: Ծիսահամալիրում սեռատարիքային սահմանափակումներ չլինելը: Ծեսի կատարման վայրը, վարդավառյան մատաղի ծեսերը որպես զանգվածային խնջույքների յուրատեսակ հանդիսություններ:

Վարդավառյան ուխտագնացությունը հայոց սոցիալ-մշակութային համակարգում: Մատաղը Վարդավառի ծիսաշարում: Վարդավառյան ուխտավայրերին առնչվող հավատալիքների համակարգը և ավանդազրույթները: Ուղեկցվող զոհաբերությունները, նվիրատվությունները, խնձոր նվիրելու սովորույթը, աղիբլիթ ճաշակելու սովորույթը, կազ-

[5] Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015. էջ 65-68

մակերպվող միջոցառումները. խաղեր, ըմբշամարտեր, ձիարշավներ, աշուղների մրցություններ, տոնավաճառներ: Դրանք որպես հինավուրց նավասարդյան տոնահանդեսներ:

Վարդավառը ավանդական և արդի կենցաղում: Վարդավառը Խորհրդային Հայաստանի ձևավորման ժամանակաշրջանում (1920-30 թթ.), Վարդավառի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները խորհրդային և հետխորհրդային համակարգերի համատեքստում:

Սուրբ Աստվածածնի վերափոխում. խաղողօրհնեքի բնապաշտական ծիսահամալիրը: Տոնը որպես Տիրամորը նվիրված հայոց եկեղեցական տաղավարային տոն, նշման ժամկետը (օգոստոսի 15-ի մերձավոր կիրակի օրը) բնորոշ արարողակարգերը. ուխտագնացությունները, մատաղները, խաղողօրհնեքի արարողությունները: Խաղողօրհնեքը որպես հեթանոսական բնապաշտական ծիսահամալիր, աղերսը ավանդական Նավասարդի և հատկապես բերք ու պտղի առատությունն ապահովող հավատալիքների հետ: Մարիամ Աստվածածնին նվիրված այս տոնի անվանման այլ տարբերակները (Աստվածածնի Ձատիկ, Խաղող Ձատիկ, Պտուղի օրհնանքի տոն): Տոնին ուղեկցող ուխտագնացությունները, մատաղները, խաղողօրհնեքի արարողությունները:

Տոնի հաջորդ երկուշաբթի կատարվող մեռելոցի խորհուրդը:

Աշնանային տոներ:

Խաչվերաց – Սուրբ Խաչը եկեղեցական և ժողովրդական տոնացույցում:

Խաչվերացը որպես հայոց եկեղեցական տաղավարային տոն: Տոնի խորհուրդը (այն վերաբերում է Հիսուս Քրիստոսի խաչափայտի ազատագրման հիշատակին): Տոնի պատմականությունը: Սեպտեմբերի 14-ը Քրիստոսի Խաչափայտի վերադարձի կամ Խաչվերացի տոն: Տոնի անվանումները (Սփխեչ կամ Սըբխեչ Խչվերաց, Ուլոց (Ուլնոց), Խրով և այլն):

Տոնի հատկանիշներից մեկը՝ ուխտագնացություններն էին, տոնի համայնքային բնույթը, ուտեստը, հանգուցյալներին նվիրված հոգեհանգստյան արարողությունները:

Նավասարդը հայ ժողովրդական տոնացույցում:

«Նավասարդ» բառի լեզվաբանական ստուգաբանությունը (նաւա-սերհատա-նոր տարի) այն ըստ մատենագիրների (ըստ Անանիա Շիրակացու և Հովհ. Իմաստասերի), եղել է Հայկ նահապետի դուստրերից մեկի անունը, որով մեր նախահայրն անվանել է տարվա առաջին ամիսը: Տոնի կատարման ժամանակը (նախապես նշվել է գարնանային օրահավասարին՝ մարտի 20-21, իսկ ապա՝ օգոստոսի 11-ին): Հայկական թվականի սկիզբը (2492 թ. Բելի դեմ Հայկի տարած հաղթանակի տարին): Նավասարդի տոնի կապը Հայկի առասպելաբանության հետ: Նավասարդը որպես տնտեսական տարվա սկիզբ (մարտի 20-21) և ավարտի (օգոստոսի 11) «նորոց պտղոց կամ հունձքի տոն»-ի հետ:

Գրիգոր Լուսավորիչի կողմից նավասարդյան տոնի փոխարինումը Ս. Հովհան Կարապետին նվիրված տոնով, Բագավանի ուխտագնացությունները, տոնական զվարճահանդեսները, զոհաբերությունները և այլն, հեթանոսական տաճարները քանդվելու մասին հիշատակությունները[6]:

Սիմոն Երևանցի կաթողիկոսի մշակած նոր տոնացույցով (XVIII դ.) տարվա սկիզբը՝ Նոր տարի կամ Տարեմուտի նշման ժամանակը (հունվարի 1-ը): Տոնի նվիրական ուտեստը (հարիսան, քեաշկեն, աղանձեղենով, ընկույզներով, քաղցրահամ մրգերի, չրեղենի տեսականին): Տոնի նշման մնացուկները ՀՀ-ում («նախրաթող»-ին՝ նոյեմբերի 10-ին հաջորդող կիրակին): Տոնի առթիվ բարեկամների միմյանց այցելությունները, նվերներ մատուցելը, հարսներին այցելությունները, նրա տան կտրից ընկույզ, տանձ ու խնձոր աննկատ իջեցնելը: «Տարին առատ և կարմիր օրերով» անցկացնելու ակընկալիքով կատարվող արարողությունները (մաքրում էին գոմերը, անասունների տակ գարի ցանում, պոչերին կարմիր թելեր կապում և այլն):

Նավասարդյան խաղերը, Նավասարդից սկսվող հարսանիքները, Նավասարդը որպես բերք ու բարիքի, կյանքի հարատևումը խորհրդանշող տոն:

[6] Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015. էջ 65-68

2. Ծեսերի, տոնակատարությունների դերը մանկապարտեզում՝ որպես նախադպրոցականների զարգացման միջոց

Տոնական հանդեսների ու զվարճանքների կազմակերպումն ու անցկացումը մանկապարտեզում տարվող մանկավարժական աշխատանքների կարևոր մասն է: Նրանց շնորհիվ իրագործվում են երեխաների բարոյական, մտավոր, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական դաստիարակության խնդիրները:

Արվեստի տարբեր ճյուղերի համատեղումը տոնական հանդեսների և զվարճանքների ժամանակ ներգործուն ազդեցություն է ունենում երեխաների զգայական աշխարհի և գիտակցության զարգացման վրա: Այս առումով տեղին է հիշել այն միտքը, որ երեխային անհրաժեշտ է սովորեցնել արվեստի միջոցով խոր գիտակցել իր մտքերն ու զգացմունքներն:

Տոնական հանդեսների և զվարճանքների նախապատրաստում ու ճիշտ կազմակերպումը մեծապես նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակության գործին: Երեխաները համախմբվում են, ապրում ընդհանուր հետաքրքրություններով, նրանց մեջ մշակվում է վարվելակերպի կուլտուրա, կարգապահություն:

Մեծ է ժողովրդական ստեղծագործությունների, հայրենիքին ու բնությանը աշխատանքին նվիրված երգերի ու բանաստեղծությունների դերը հայրենասիրական ազնիվ զգացումների զարգացման գործում:

Տոնահանդեսների ու զվարճանքների համար սովորած երգերը, տարբեր ազգերի տարրերը, բանաստեղծությունները ոչ միայն մշակում են գեղարվեստական ճաշակ, այլև օգնում են հաղորդակցվելու տարբեր ազգերի մշակույթին, ընդլայնում են երեխաների մտահորիզոնը, զարգացնում հիշողությունը, երևակայությունը, խոսքը, որ այնքան կարևոր է այդ տարիքի երեխաների համար, նպաստում նրանց մտավոր զարգացմանը:

Գեղագիտական դաստիարակության կարևոր միջոցներն են միջավայրի գեղարվեստական ձևավորումը, երեխաների մտքին ու հոգուն հարազատ բարձրարժեք ստեղծագործություններով հագեցված ծրագիրը, ելութների բարձր մակարդակով և գեղեցիկ կատարում:

Երաժշտական խաղերը, պարերը ամրապնդում և զարգացնում են երեխաների օրգանիզմը, նպաստում շարժումների ներդաշնակությունը:

Տոնական հանդեսների և զվարճանքների նախապատրաստումն ու անցկացումը իրագործվում է պլանավորված և պարբերաբար՝ չխանգարելով մանկապարտեզի ընդհանուր աշխատանքներին:

Տոնական հանդեսների և զվարճանքների կազմակերպումն ու անցկացումը:

Կազմակերպվող ամեն մի տոնական հանդես ու զվարճանք պետք է ունենաս որոշակի նպատակաուղղվածություն: Երեխան պետք է զգա ու հասկանա , թե ինչի համար է կազմակերպվում այս կամ այն հանդեսը: Ընտրված նյութերը՝ երգեր, պարեր, բանաստեղծություններ, երաժշտություն, բեմականացում, գեղարվեստական ձևավորում , պետք է արտահայտեն տոնի հիմնական գաղափարը: Շատ կարևոր է նախապատրաստվող հանդեսի ծրագրի ընտրությունը: Այն կազմելիս անհրաժեշտ է առաջնորդվել <<մանկապարտեզի դաստիարակության ծրագրով>>: Ընտրված նյութերը պետք է բավարարեն դաստիարակչական և ուսուցողական խնդիրներին, ունենան գեղարվեստական արժեք, լինեն մատչելի երեխաների համար: Նյութերն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները, ունակությունները և հետաքրքրությունները:

Փոքրերի և միջին խմբի երեխաների համար կազմակերպված տոնակատարությունը կարող է տևել 25-30 րոպե, իսկ ավագ և նախապատրաստական խմբերում 45-55 րոպե: Տոները կոչված են ուրախություն պատճառելու երեխաներին, ուստի ծրագիրն այնպես պետք է կազմել, որ հանդեսին մասնակցեն բոլոր երեխաները՝ յուրաքանչյուրն ըստ իր կարողությունների:

Տոների տեսակները և դրանց բովանդակությունը:

Նախադպրոցական հիմնարկներում հանձնարարվում են նշել հետևյալ տոները՝ Նոր տարին, Զատիկը, Մայրիկների տոնը, Գարնան տոնը, Համբարձման տոնը, Վարդավառը, Ծաղկի տոնը, Բերքի տոնը:

Հաղթանակի և երեխաների դպրոց ճանապարհելու տոները նշվում են ցերեկույթի ձևով:

Հասարակական Տոներ:

Հասարակական տոները նշվում են հատուկ հանդիսավորությամբ: Այդպիսի տոների ծրագիրը կազմված է երեք մասից:

Առաջին մաս, երեխաների հանդիսավոր մուտքն է ծաղիկներով, փուչիկներով, ճյուղերով , դրոշակներով:

Նրանք քայլում են, կազմում տարբեր շարքեր, երբեմն այս մասում տրվում են նաև ֆիզկուլտ վարժություններ, որից հետո երեխաները արտասանում են տոնին նվիրված բանաստեղծություններ, կատարում են մեկ - երկու երգ:

Երկրորդը հիմնական մասն է, որը կրում է համերգային բնույթ: Այն իր մեջ ընդգրկում է խմբակային և անհատական կատարումներ :

Երրորդը ավարտական մասն է, որի ժամանակ երեխաների ուշադրությունը նորից է կենտրոնացվում տոնի հիմնական գաղափարի վրա: Տոնական հանդեսը վարողը նորից է շնորհվում բոլոր մասնակիցներին, երեխաներն արտասանում են, կատարում մեկ - երկու երգ՝ նվիրված տոնին և ֆայլերգի հնչյունների տակ դուրս գալիս դահլիճից:

Կենցաղային Տոներ

Կենցաղային տոները տարբերվում են հասարակական տոներից: Դրանց մեջ հատկապես կարևոր տեղ է գրավում երեխաների ամենասիրելի տոներից մեկը ՝ Նոր տարին: Դա հեքիաթային, կախարդական իրադարձություններով, հուզիչ հետաքրքիր անակնկալներով հարուստ տոն է, որի ծրագիրը դարձյալ բաղկացած է երեք ինքնատիպ մասերից:

Առաջին մասում երեխաները ներս են մտնում դահլիճ ուրախ, թեթև երաժշտության՝ տակ, դիտում են գեղեցիկ զարդարված տոնածառը, որից հետո արտասանում բանաստեղծություններ, կատարում խմբային շուրջպարեր, երգեր:

Երկրորդ մասում հայտնվում են ավանդական Ձմեռ պապին, Ձյունանուշիկը, և շարունակում են վարել հանդեսը: Ուրախ տրամադրություն է տիրում դահլիճում, երեխաներն արտասանում են, երգում, պարում, ցուցադրում փոքրիկ բեմականացումներ, կատարում են ատրակցիոն, ծիծաղաշարժ խաղերը, առաջադրվում են հանելուկներ:

Երորրդ մասը տոնակատարության ավարտն է: Ձմեռ պապին ու Ձյունանուշիկը հրաժեշտ են տալիս երեխաներին: Մեկ - երկու մասսայական պարից հոտ երեխաները դուրս են գալիս դահլիճից: Երեխաները շատ են սիրում երաժշտական պարապմունքների ժամանակ վերհիշել տոնական հանդեսից ստացած տպավորությունները: Դրա համար դահլիճում կարելի է թողնել որոշ պարագաներ, համապատասխան զգեստներ: Երեխաների ցանկությամբ կրկնվում են որոշ համարներ, որի ժամանակ յուրաքանչյուր երեխա ընտրում է իրեն դուր եկած դերը:

3. Գործնական մաս

Արդյունավետ ու դրական աշխատանքի համար նախադպրոցական մանկավարժը պետք է ունենա մասնագիտական ու մարդկային բարձր որակներ, սիրի երեխաներին: Ոչ մանկավարժական փորձին հղում անելով՝ կարող եմ արձանագրել, որ ինչպես դպրոցում ուսուցիչը, այնպես էլ մանկապարտեզում դաստիարակը օրինակ է աշխարհը նոր ճանաչող նախադպրոցականի համար, ուստի և մարդասիրությունը, բարեվարքությունն ու հոգատարությունը մեծագույն հիմնաքարերն են, որպեսզի դաստիարակը հաջողի:

Թեմա՝ Զատկի տոն

Կահավորումը՝ տոնական սեղան,

Կիրառվող մեթոդները՝ ավանդական մեթոդներ**,**

Նպատակը՝ Ծանոթացնել Զատկի տոնի ավանդույթներին և տոնի խորհուրդին:

Ծանոթացում տոնի հետ:

Վերջնարդյունքները

- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- Լեզվական գրագիտություն կարողունակություն,
- Սովորելու կարողունակության ձևավորում:

Ընթացքը

Ծանոթացրեցի տոնի հետ ներկայացրեցի տոնի խորհուրդները: Խմբային քննարկումների օգնությամբ երեխաները հաջորդաբար ներկայացրեցին զատկի տոնին նվիրված իրենց երգերն ու ասույթները:

Թեմայի շուրջ գիտելիքներն ավելի առարկայական դարձնելու համար իրականացրեցի խմբային քննարկումները: Ընդհանուր եզրահանգումներ կատարելը կօգնի, որ սաների մասնակցությունը լինի համաչափ, և նրանք հնարավորություն կունենան միմյանցից սովորել, քաջալերել մեկմեկու:

Հաջորդիվ թվարկեցին զատկի ուտեստները և նախապատրաստեցին զատկի սեղան:

Ներկա էին ծնողները և տնօրենը:

Ծնողների կարծիք: Երեխաները կարծես փոքրիկ հրեշտակներ լինեին, շատ գեղեցիկ էին: Դահլիճը ամբողջությամբ շատ գեղեցիկ զարդարված էր, այդ զարդարանքը մեզ հաղորդում էր տոնի ոգի:

Միջոցառումը սկսեցին աղոթքից, այնուհետև երեխաները ասմունքեցին, երգեցին տոնին նվիրված երգեր, եղավ նաև պարային համար: Բոլորը մեծ ոգևորությամբ էին պատրաստվել, ամենքը ուներ իր ակտիվ մասնակցությունը և ոչ մի ջանք չէին խնայում գոհացնելու համար հյուրերին: Այնուհետև երեխաները հյուրերին նվիրեցին ծաղիկներ, հյուրասիրեցին գինի, կռվացրեցին ձու և ողջունեցին միմյանց:

Ամփոփիչ հատվածում ստեղծեցի հետադարձ կապ: Այդ նպատակով հանձնարարեցի սաներին պատասխանել հեևյալ հարցերին՝

- **Գիտեի,**
- **Ուզում էի իմանալ,**
- **Սովորեցի:**

Ուսումնական պարապմունքի ավարտին սաների համար ցուցադրվեց անիմացիոն ֆիլմը:

Եզրակացություն

Տոներն ու ժամանցը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում վառ և ուրախ իրադարձություններ են: Համադրելով արվեստի տարբեր տեսակներ՝ դրանք մեծ ազդեցություն են ունենում երեխաների զգացմունքների ու գիտակցության ձևավորման, ինչպես նաև գեղագիտության զարգացման վրա: Հանդեսների և տոնակատարությունների նախապատրաստումն ու անցկացումը մեծապես խթանում է նախադպրոցականների սոցիալականացմանն ու դաստիարակությանը: Նրանց միավորում է ընդհանուր փորձը՝ դաստիարակելով թիմում աշխատելու կարողություն և կոլեկտիվ մտածողություն: Սովորելով երգեր, բանաստեղծություններ, պարեր՝ երեխաները դառնում են մշակութապես ավելի կարողունակ, շատ բան են սովորում երկրի, բնության, տարբեր ազգերի մշակույթների մասին, ինչն էլ թույլ է տալիս, որ ընդլայնվի նրանց մտահորիզոնը, կենտրոնանա հիշողությունը, զարգանա գեղարվեստական խոսքը: Տոնական մթնոլորտը, դահլիճի վառ զարդարանքները, գունագեղ հագուստները, այս ամենը կարևոր գործոններ են նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում: Առանցքային նշանակություն ունի երեխաների գեղարվեստական խոսքը: Ավագ նախադպրոցականները նմանօրինակ միջոցառումներին ավելի պատասխանատվությամբ են մոտենում, լավ սերտում են իրենց դերերն ու բանաստեղծությունները:

Ցանկացած հանդես կամ տոնակատարություն իր մեջ ներառում է արվեստի տարբեր տեսակներ՝ գրականություն, երաժշտություն, նկարչություն, թատրոն, մնջախաղ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նահապետյան Ռ.Ա., ուղեցույց «Հայ ազգագրություն» դասընթացի: Ուսում-նամեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ռ.Ա. Նահապետյան. – Եր., ԵՊՀ հրատ., 2015

2. Մարության Ա. Ա., Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն», էջ 33:

3. Մկրտչյան Ն., «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019, էջ 9: